MASTERCARD ՎՃԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՔԱՐՏԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀՐԱՊԱՐԱԿՎՈՂ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

Սույն հրապարակվող պայմանագիրը համարվում է կնքված՝ **«ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի** (հասցե՝ ՀՀ, ք.Երևան, Վ.Սարգսյան 10, ՀՎՀՀ՝ 02574955, Թ/Հ՝ 103002102509, ՀՀ ԿԲ, էլ.փոստ՝ info@armswissbank.am, հեռախոս՝ (+374 60) 757 000, (+374 11) 757 000), այսուհետ նաև՝ «**Բանկ**», և սույն պայմանագրի Հավելված 1-ը՝ **Վճարային քարտի տրամադրման դիմում-պայմանագիրը ստորագրած անձի**, այսուհետ՝ «**Քարտապան**», միջև՝ սույն պայմանագրի Հավելված 1-ը՝ Վճարային քարտի տրամադրման դիմում-պայմանագիրը Քարատապանի կողմից ստորագրվելու և Բանկի կողմից Քարտապանին քարտ տրամադրելու որոշում կայացվելու պահից:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Սույն պայմանագրով Բանկը, Հավելված 1-ը լրացրած և ստորագրած անձին՝ Քարտապանին, Բանկի դրական որոշման առկայության փաստով տրամադրում է՝ Հավելված 1-ում լրացված տվյալներով վճարային քարտ՝ գործարքներ իրականացնելու նպատակով, և Քարտապանի անունով բացում է Հավելված 1-ում նշված հաշիվը, նշված արժույթով՝ վճարային քարտով կատարված գործարքների դիմաց փոխհաշվարկներն իրականացնելու նպատակով:

1.2. Քարտապանի հաշվին առկա դրամական միջոցները (ներառյալ՝վարկային գիծը) կարող են օգտագործվել բացառապես վճարային քարտի կամ նրա վավերապայմանների (ռեկվիզիտների) կիրառմամբ (օգտագործմամբ):

1.3. Վճարային քարտի համարը կարող է փոփոխվել՝ որևէ հիմքով վճարային քարտի վերաթողարկման դեպքում:

1.4. Վճարային քարտը Քարտապանի կողմից օգտագործելու ընթացքում, ինչպես նաև վճարային քարտի վերաթողարկման դեպքում, Բանկի և Քարտապանի փոխհարաբերությունները կարգավորվում են սույն պայմանագրով և վճարային քարտի համակարգի կանոններով:

2. ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. Պայմանագրում օգտագործվում են հետևյալ հասկացությունները՝

- ***Կողմեր***՝ Բանկը և Քարտապանը միասին հիշատակվելիս:
- ***Վճարային քարտ*** կամ ***Քարտ***՝ «ArCa» լոկալ և «MasterCard» միջազգային վճարային համակարգերի պլաստիկ վճարային քարտ, որը հանդիսանում է Բանկի սեփականությունը և տրամադրվում է Քարտապանին՝ Բանկում բացված և սպասարկվող համապատասխան հաշվով կանխիկ միջոցներ ստանալու և անկանխիկ վճարումներ կատարելու նպատակով:
- ***Հաշիվ***՝ Բանկում Քարտապանի անվամբ բացված և սպասարկվող բանկային հաշիվ, որում հաշվառվում են Քարտով և դրանց հետ կապված բոլոր գործառնությունները:
- ***Սակագներ***՝ Բանկի կողմից սահմանված և հաստատված, Քարտերի տրամադրման և սպասարկման նպատակով հրապարակված սակագները, ներառյալ՝ Բանկի առանձին որոշմամբ սահմանված հատուկ, փոփոխված և/կամ արտոնյալ սակագները:
- ***Վճարային քարտի տրամադրման դիմում-պայմանագիր*** կամ ***Դիմում***՝ Քարտի թողարկման համար անհրաժեշտ տեղեկատվություն պարունակող դիմում-պայմանագիր (Հավելված 1):
- ***Լրացուցիչ Քարտ***՝ Քարտապանի կողմից լիազորված անձին օգտագործման համար տրամադրված Քարտ՝ համաձայն Քարտապանի Դիմումի: Լրացուցիչ քարտով գործառնություններն իրականացվում են Քարտապանի լիազորված անձի կողմից, Քարտապանի կողմից սահմանված սահմանաչափի սահմաններում, ընդ որում այդ գործառնությունների հետ կապված ամբողջ պատասխանատվությունը ստանձնում է Քարտապանը:
- ***Քարտի վավերապայմաններ (ռեկվիզիտներ)***՝ Քարտի դիմերեսին և դարձերեսին դաջված կամ այլ կերպով պատկերված Քարտի համարը, վավերության ժամկետը/ժամկետները, Քարտապանի անունը և ազգանունը, ինչպես նաև CVV կամ CVC կոդը:

- ***Վճարային սահմանաչափ*** ՝ դրամական միջոցների չափ (Քարտային հաշվի մնացորդը և/կամ վարկային գծի (օվերդրաֆտի) հանրագումարը՝ բացառությամբ չնվազող մնացորդի), որի սահմաններում Քարտապանը կարող է ստանալ կանխիկ գումար և կատարել անկանխիկ վճարումներ:
- ***Քարտային հաշվի նվազագույն մնացորդ*** ՝ Բանկի սակագներով սահմանվող Քարտային հաշվին առկա, սակայն Քարտապանի համար անհասանելի գումար, որը ծառայում է անհրաժեշտության դեպքում գերածախսի մարման կամ տույժերի, տուգանքների և այլ վճարների գանձման համար, որը վերադարձվում է Քարտապանին Քարտային հաշիվը Քարտապանի կողմից փակելուց հետո:
- ***Գերածախս*** ՝ Քարտապանին հասանելի դրամական միջոցներից ավել գումարի օգտագործում:
- ***Գործարքի հավաստագրում*** ՝ քարտով գործարքի կատարման համար Բանկի կողմից տրվող թույլտվություն կամ հաստատում:
- ***Անհատական նույնականացման համար (PIN-կոդ)*** ՝ Քարտապանին նույնականացնող ծածկագիր, որը կիրառվում է Քարտապանի կողմից քարտային վճարահաշվարկային համակարգերի կանոններով նախատեսված դեպքերում քարտով գործարքներ կատարելիս:
- ***Գործարք*** ՝ Քարտի միջոցով կատարված ցանկացած անկանխիկ վճարում, այդ թվում կոմունալ վճարումներ, փոխանցումներ, ինչպես նաև կանխիկի ստացման գործարքներ:
- ***Փոխհաշվարկային փաստաթղթեր*** ՝ թղթային կամ էլեկտրոնային փաստաթղթեր, որոնք հիմք են ծառայում Քարտի կամ նրա վավերապայմանների (ռեկվիզիտների) կիրառմամբ (օգտագործմամբ) իրականացված գործարքների դիմաց Հաշվի դեբետագրման կամ կրեդիտագրման համար:
- ***Քարտի կասեցում (բլոկավորում)*** ՝ տվյալ համարով քարտին ցանկացած Գործարքի հավաստագրման հարցման ժամանակավոր կամ վերջնական մերժում:
- ***Քաղվածք*** ՝ Հաշվետու ամսվա ընթացքում Քարտով/Լրացուցիչ քարտերով իրականացված և հաշվանցված գործարքների վերաբերյալ Բանկի կողմից կազմված հաշվետվություն:
- ***Վարկային գիծ կամ օվերդրաֆտ*** ՝ Բանկի կողմից սահմանված վարկավորման կանոններին և վարկավորման պայմաններին համապատասխան, Քարտապանի հետ առանձին կնքված վարկային պայմանագրի պայմանների համաձայն Քարտով տրամադրվող դրամական միջոցներ (վարկ):
- ***Stop-ցուցակ*** ՝ միջազգային վճարահաշվարկային համակարգերի կողմից վարվող ցուցակ, որտեղ Քարտապանի կամ Բանկի ցանկությամբ տեղադրվում են հափշտակված վճարային քարտերի համարները՝ դրանց միջոցով գործարքների իրականացումը կանխելու նպատակով:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. **Քարտապանն իրավունք ունի.**

3.1.1. Օգտագործել Քարտը որպես վճարային միջոց Գործարքներ կատարելու համար:

3.1.2. Դիմել Բանկին Լրացուցիչ քարտեր ստանալու համար, Լրացուցիչ քարտերը կասեցնելու համար՝ գրավոր տեղեկացնելով դրանց փակման մասին և վերադարձնելով դրանք Բանկին: Ընդ որում, փակման մասին ծանուցում ստանալուց հետո Բանկը պատասխանատվություն չի կրում Լրացուցիչ քարտերով կատարված չհավաստագրված գործարքների համար, եթե դրանք չեն վերադարձվել Բանկին:

3.1.3. Բանկից ստանալ Քարտով և/կամ Լրացուցիչ քարտերով կատարված Գործարքների ամսական քաղվածքը:

3.1.4. Հանձնարարել Բանկին կասեցնել և/կամ ապակասեցնել Քարտը/Լրացուցիչ քարտերը:

3.1.5. Պատվիրել և ստանալ նոր Քարտ/Լրացուցիչ քարտեր՝ ժամկետները լրացած քարտերի փոխարեն:

3.1.6. Հիմնավոր պատճառներով և ArCa/MasterCard վճարային համակարգերի կանոններին համապատասխան բողոքարկել Քաղվածքում արտացոլված ցանկացած գործարք՝ Բանկի կողմից սահմանված ձևով գրավոր բողոքարկում ներկայացնելով Բանկ՝ ՀՀ օրենսդրությամբ և ArCa/MasterCard վճարային համակարգերի կանոններով սահմանված ժամկետում: Նշված ժամկետում Քաղվածքում արտացոլված Գործարքների դիմաց բողոքարկում չստանալու դեպքում այդ Գործարքները համարվում են Քարտապանի կողմից ընդունված և այլևս բողոքարկման ենթակա չեն: Ընդ որում, Քարտապանի կողմից չթույլատրված կամ նրա կողմից չկատարված լինելու պատճառով Գործարքների դիմաց բողոքարկում կարող է ներկայացվել բացառապես Քարտի ռեկվիզիտները փոխարինող վերաթողարկում իրականացնելու դիմում կամ Քարտի փակման դիմում ներկայացնելուց հետո:

3.1.7. Հաշվին միջոցներ մուտքագրել ինչպես անձամբ, այնպես էլ իր հանձնարարությամբ՝ երրորդ անձի միջոցով, անկանխիկ կամ կանխիկ:

3.1.8. Լուծել սույն պայմանագիրը՝ առնվազն 15 (երեսուն) օր առաջ այդ մասին գրավոր ծանուցելով Բանկին և մարելով Բանկի հանդեպ առկա պարտավորությունները:

3.2. **Քարտապանը պարտավորվում է.**

3.2.1. Քարտի բացման համար Բանկին ներկայացնել բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը՝ Բանկի սահմանած ցանկին համապատասխան, ինչպես նաև Բանկին տրամադրել իր կամ իր լիազորված անձի մասին հավաստի տեղեկություններ:

3.2.2. Իրականացնել Գործարքներ միայն Հաշվի մնացորդի (վարկային սահմանաչափի), Կանխիկացման և Վճարային սահմանաչափերի սահմաններում:

3.2.3. Վճարել Բանկին Քարտի/Լրացուցիչ քարտերի և Հաշվի սպասարկման հետ կապված բոլոր վճարները, տույժերը և տուգանքները, որոնք բխում են սույն պայմանագրից, Բանկի կողմից հաստատված վճարային քարտերի սպասարկման սակագներից՝ համաձայն Կանոնների և ArCa/MasterCard վճարային համակարգերի կանոնների:

3.2.4. Դրամական միջոցների գերածախս առաջանալու դեպքում մեկ ամսվա ընթացքում մարել առաջացած գերածախսի գումարը և հաշվարկված տույժը:

3.2.5. Քարտի գործողության դադարեցման դեպքում այն 10 օրացուցային օրվա ընթացքում հանձնել Բանկին:

3.2.6. Ժամկետանց կամ անվավեր ճանաչված Քարտը վերադարձնել Բանկ:

3.2.7. Քարտի/Լրացուցիչ քարտերի կորստի կամ նրա ռեկվիզիտների և/կամ PIN-կոդի այլ անձանց հասանելի դառնալու կասկած ունենալու դեպքում այդ մասին անմիջապես տեղեկացնել Բանկին և կատարել Քարտի կասեցում: Քարտի կասեցումն իրականացնելուց հետո Բանկը պատասխանատվություն է կրում ցանկացած հավաստագրված գործարքի համար: Քարտի կասեցումը կարող է կատարվել բանավոր՝ Քարտի գաղտնաբառի օգտագործմամբ կամ գրավոր դիմումի ներկայացման միջոցով:

3.2.8. Քարտի կորստի, գողության, զեղծարարության (կամ կասկածի) մասին Բանկին տեղեկացնելուց հետո քարտով իրականացված՝ հավաստագրում չպահանջող գործարքների, այդ թվում՝ ինտերնետ միջավայրում կատարված գործարքների համար պատասխանատվությունը կրում է Քարտապանը: Առանց հավաստագրման կատարված գործարքների բողոքարկումը հնարավոր դարձնելու համար Քարտապանի համապատասխան դիմումի հիման վրա Բանկը տվյալ վճարահաշվարկային համակարգի կանոններով սահմանված ժամկետում քարտը ներառում է առաջիկա Stop-ցուցակում՝ համաձայն Բանկի սակագների:

3.2.9. Ստանձնել ֆինանսական պատասխանատվություն Քարտով/Լրացուցիչ քարտերով կատարված իր կողմից չթույլատրված և/կամ չիրականացված բոլոր Գործարքների համար, եթե չի իրականացվել Քարտի կասեցում:

3.2.10. Ստանձնել ֆինանսական պատասխանատվություն առանց հավաստագրման Քարտով/Լրացուցիչ քարտերով կատարված Գործարքների համար և/կամ անհրաժեշտության դեպքում Բանկ ներկայացնել գրավոր դիմում՝ Քարտով առանց հավաստագրման Գործարքների ներկայացումը կանխելու համար (առձեռն, e-mail, fax)՝ հստակ նշելով, թե ըստ MasterCard միջազգային վճարային համակարգի տարածքային տարանջատման աշխարհի որ տարածաշրջաններում և ինչ ժամկետով է ցանկանում կանխել Քարտով իրականացված բոլոր Գործարքների ներկայացումը: Ընդ որում, Քարտով/Լրացուցիչ քարտերով իրականացված բոլոր Գործարքների ներկայացման կանխման նվազագույն ժամկետը կազմում է 2 (երկու) շաբաթ՝ սկսած դիմումը ստանալու աշխատանքային շաբաթվա Շաբաթ օրվանից 2 (երկու) շաբաթվա ընթացքում:

3.2.11. Նախկինում կորած Քարտը/Լրացուցիչ քարտերը գտնելու դեպքում վերադարձնել դրանք Բանկին:

3.2.12. Չբողոքարկել PIN-կոդի մուտքագրմամբ իրականացված գործարքները՝ դրանք իր կողմից չթույլատրելու և/կամ չիրականացնելու հիմքերով:

3.2.13. Ողջամիտ ժամկետում Բանկին տեղեկացնել հեռախոսահամարի, աշխատանքի, բնակության վայրի և նախկինում տրամադրված այլ տեղեկությունների փոփոխությունների մասին:

3.2.14. Քարտի/Լրացուցիչ քարտերի ժամկետային վերաթողարկում իրականացնելու վերաբերյալ իր որոշման մասին Բանկին տեղեկացնել Քարտի/Լրացուցիչ քարտերի ժամկետը լրանալուց մեկ ամիս առաջ:

3.2.15. Գործարքների իրականացման ժամանակ սպասարկող աշխատակցի պահանջով ներկայացնել անձը հաստատող փաստաթուղթ:

3.2.16. Առևտրի/սպասարկման կետերում գնված ապրանքների/մատուցված ծառայությունների որակից դժգոհ լինելու և/կամ ընդհանրապես ապրանքները/ծառայությունները չստանալու դեպքում համապատասխան կետից պահանջել պատշաճ որակի ապրանքի/ծառայության տրամադրում և միայն դրանից հետո դիմել Բանկին վճարված գումարի բողոքարկման գործընթաց սկսելու համար:

3.2.17. Բանկի պահանջով փոխհատուցել բողոքարկվող գումարի հետգանձման հետ կապված Բանկի կատարած բոլոր ծախսերը:

3.2.18. Երրորդ անձանց չփոխանցել Քարտը/Լրացուցիչ քարտերը և PIN-կոդը:

3.2.19. Բանկից չպահանջել Գործարքների կատարման և քարտային հաշվին փաստացի հաշվանցման ժամանակահատվածում արտարժութային փոխարժեքների տատանումից առաջացած հնարավոր կորուստների փոխհատուցում:

3.2.20. Համաձայնվել այլ բանկերին պատկանող սպասարկման կետերում կատարված Գործարքների փոխհաշվարկների իրականացման ժամանակ օգտագործվող վճարային համակարգերի կողմից սահմանված արտարժույթի փոխարժեքներին, ինչպես նաև Բանկի սպասարկման կետերում Գործարքների փոխհաշվարկներն իրականացնելու ժամանակ օգտագործվող Բանկի արտարժույթի փոխարժեքներին:

3.2.21. Հետ վերադարձնել Բանկի կողմից սխալմամբ Հաշվին մուտքագրված միջոցները ոչ ուշ քան 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում՝ հաշվված այն պահից, երբ հայտնաբերվել է սխալ մուտքագրման փաստը կամ ստացել է դրա վերաբերյալ Բանկի գրավոր պահանջը:

3.2.22. Քարտը ստանալուն պես անմիջապես ստորագրել Բանկի կողմից ներկայացված համապատասխան փաստաթղթերում Քարտի և PIN-կոդը ստանալու վերաբերյալ, ինչպես նաև Քարտի դարձերեսի վրա նախատեսված հատուկ դաշտում և հետագայում զերծ պահել այն երրորդ անձանց կողմից օգտագործվելուց՝ Քարտը և PIN-կոդը մշտապես պահելով իր անմիջական տիրապետման և օգտագործման ներքո, ընդ որում Քարտը և/կամ PIN-կոդը չտրամադրել այլ անձանց, իսկ տրամադրելու դեպքում պատասխանություն կրել Քարտով կատարված գործարքների համար:

3.2.23. Խստորեն հետևել Կանոններին և պահպանել սույն պայմանագրի դրույթները:

3.3. **Բանկն իրավունք ունի.**

3.3.1. Ցանկացած օրինական եղանակներով ստուգել Քարտապանի վճարունակությունը և անձնական տվյալները:

3.3.2. Մերժել Քարտի վերաթողարկման ցանկացած դիմում առանց Քարտապանին բացատրությունների տրամադրման:

3.3.3. Իրավասու պետական մարմինների կողմից ստացված համապատասխան որոշման հիման վրա՝ համաձայն ՀՀ օրենսդրության կասեցնել Քարտը/Լրացուցիչ քարտերը:

3.3.4. Քարտապանի կողմից սույն պայմանագրի դրույթների և Կանոնների խախտման դեպքում կասեցնել Քարտը/Լրացուցիչ քարտերը և առանց ծանուցման մարել քարտի գծով առաջացած ժամկետանց պարտավորությունները Բանկում բացված ավանդային/ընթացիկ հաշիվներից, իսկ դրանց անբավարար լինելու դեպքում ձեռնարկել պարտքերի մարմանն ուղղված, ՀՀ օրենսդրությամբ սահմանված միջոցներ՝ մուտքագրելով քարտապանի անունը համակարգի անբարեխիղճ Քարտապանների ցուցակում:

3.3.5. Քարտի կասեցման դեպքում կասեցնել նաև բոլոր Լրացուցիչ քարտերը:

3.3.6. Անակցեպտ կերպով Հաշվից գանձել՝

- սխալմամբ Հաշվին մուտքագրված գումարները,
- սույն պայմանագրով, Բանկի սակագներով և Կանոններով նախատեսված վճարները, տույժերը և տուգանքները,
- Ըստ ՀՀ օրենսդրության իրավասու պետական մարմինների կողմից ստացված որոշման հիման վրա գանձման ենթակա գումարները,
- Քարտային հաշվի նվազագույն մնացորդի համալրման համար անհրաժեշտ գումարները,
- Քարտի/Լրացուցիչ քարտերի միջոցով կատարված գործարքների գումարները՝ վճարային համակարգերից ստացված Փոխհաշվարկային փաստաթղթերի հիման վրա,
- ՀՀ օրենսդրությամբ նախատեսված, տվյալ դեպքում կիրառելի բոլոր հարկերը,
- սույն պայմանագրի և Կանոնների խախտումով իրականացված գործարքների գումարները,

- անհրաժեշտության դեպքում Քարտապանին որոնելու աշխատանքների իրականացման ծախսերը,
- Բանկի առջև Քարտապանի պարտավորությունների մարման համար առաջացած ծախսերը:

3.3.7. Դրամական միջոցների գերածախս առաջանալու դեպքում և այն Քարտապանի կողմից ժամանակին չմարելու դեպքում կատարել Քարտի կասեցում և անակցեպտ գանձել անհրաժեշտ գումարը Քարտային հաշվի նվազագույն մնացորդից, ինչպես նաև կատարել տույժերի և տուգանքների հաշվեգրում՝ համաձայն Բանկի սակագների:

3.3.8. Գանձել վճարներ, տույժեր, տուգանքներ կապված Քարտի/Լրացուցիչ քարտերի սպասարկման և տրամադրման հետ՝ համաձայն սույն պայմանագրի և Բանկի սակագների:

3.3.9. Իրականացնել բոլոր անհրաժեշտ արտարժութային փոխարկումները կապված փոխհաշվարկների իրականացման հետ, ընդ որում, Գործարքի փաստացի կատարման ամսաթվի և Գործարքի հաշվանցման ամսաթվի միջև ընկած ժամանակահատվածի ընթացքում արտարժութային փոխարժեքների տատանումներից Քարտապանի հնարավոր ֆինանսական կորուստները չեն կարող լինել բողոքարկման առարկա:

3.3.10. Մերժել Քարտապանի կողմից անկանխիկ գործարքի դիմաց ներկայացված բողոքարկման դիմումը, եթե գումարը տվյալ ապրանքի կամ ծառայության համար վճարվել է Քարտի միջոցով մասամբ կամ մի քանի գործարքներով:

3.3.11. Մերժել Քարտով կատարված Գործարքի բողոքարկման դիմումը, եթե Գործարքը կատարվել է PIN կոդի գործածմամբ:

3.3.12. Մերժել Քարտի կեղծման պատճառով կամ երրորդ անձանց կողմից օգտագործման հետևանքով հափշտակված գումարների բողոքարկումը, եթե գումարներն անհնար է վերադարձնել ըստ ArCa/MasterCard վճարային համակարգերի կանոնների:

3.3.13. Միակողմանիորեն փոփոխել Բանկի գործող սակագները և Կանոնները՝ այդ մասին Քարտապանին տեղեկացնելով Քարտապանի էլեկտրոնային փոստին ուղարկելու և/կամ Բանկի ինտերնետ կայքէջում տեղադրելու և/կամ այլ եղանակով:

3.3.14. Քարտի ժամկետը լրանալուց հետո մեկ ամսվա ընթացքում Քարտապանի՝ Բանկ չներկայանալու դեպքում փակել քարտային հաշիվը:

3.3.15. Քարտից հրաժարվելու դեպքում Քարտապանին չվերադարձնել Քարտի սպասարկման վարձը:

3.4. **Բանկը պարտավորվում է.**

3.4.1. Քարտապանին Քարտը տրամադրել Դիմումը բավարարելու օրվանից հետո 4 (չորս) բանկային օրվա ընթացքում: Նույն ժամկետում սահմանված կարգով վերաթողարկել Քարտը:

3.4.2. Քարտից հրաժարվելու դեպքում վերադարձնել Քարտապանին Քարտային հաշվի նվազագույն մնացորդը և հաշվարկված տոկոսագումարը:

3.4.3. Ապահովել Քարտի սպասարկումը՝ համաձայն ArCa/MasterCard վճարային համակարգերի կողմից ընդունված ստանդարտների և կանոնների:

3.4.4. Յուրաքանչյուր ամիս Քարտապանին տրամադրել Քաղվածք՝ Քարտապանի հետ համաձայնեցված կարգով:

3.4.5. Իրականացնել գումարների մուտքագրումը Հաշվին՝ ոչ ուշ, քան Բանկի դրամարկղ գումարի մուտքագրման օրվան հաջորդող բանկային օրը՝ կանխիկ մուտքի դեպքում, կամ ոչ ուշ, քան Բանկի թղթակցային հաշվին գումարի մուտքագրման օրվան հաջորդող բանկային օրը՝ անկանխիկ մուտքի դեպքում:

3.4.6. Սահմանված կարգով ընդունել Քարտապանի կողմից Գործարքների բողոքարկման դիմումները և ձեռնարկել բոլոր ընթացակարգերը Քարտապանի շահերը պաշտպանելու համար՝ համաձայն ArCa/MasterCard վճարային համակարգերի կողմից ընդունված կանոնների:

3.4.7. Քարտապանի կողմից Բանկում բացված բոլոր տեսակի հաշիվների միջոցներից անակցեպտ եղանակով մարել քարտային հաշվի գծով առաջացած պարտքը:

3.4.8. Քարտի կորստի վերաբերյալ Քարտապանից ծանուցում ստանալուց հետո կատարել Քարտի կասեցում: Բանկը պատասխանատվություն է կրում կորցրած Քարտի ոչ օրինական օգտագործման համար միայն կորստի վերաբերյալ ծանուցում ստանալու և միայն դրանից հետո իր կողմից հավաստագրված գործարքների համար:

3.4.9. Հաշվին հաշվեգրել տոկոսագումարներ՝ համաձայն Բանկի սակագների և իր ներքին իրավական ակտերի:

3.4.10. ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով պահպանել սույն պայմանագրի գաղտնիությունը:

4. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

4.1. Քարտապանը պատասխանատվություն է կրում սույն պայմանագրով և Կանոններով նախատեսված իր պարտականությունների չկատարման և/կամ ոչ պատշաճ կատարման համար:

4.2. Այն վնասը, որը պատճառվել է Բանկին Քարտապանի կողմից սույն պայմանագրով և Կանոններով նախատեսված իր պարտականությունների ոչ պատշաճ կատարման հետևանքով, ենթակա է փոխհատուցման ամբողջ չափով:

4.3. Բանկը պատասխանատվություն է կրում Քարտապանի, Քարտի և Գործարքների հետ կապված ամբողջ տեղեկատվության գաղտնիության պահպանման համար՝ համաձայն ՀՀ օրենսդրության, սույն պայմանագրի և Կանոնների:

4.4. Բանկը պատասխանատվություն չի կրում իր վերահսկողության շրջանակներից դուրս տեղի ունեցած կոնֆլիկտային իրավիճակների համար, որոնք կապված են այլ բանկերի սպասարկման կետերի կողմից Քարտը/Լրացուցիչ քարտերը սպասարկման չընդունելու, իրեն կամ այլ բանկերին պատկանող ծրագրատեխնիկական սարքերի անսարքության (Բանկոմատներ և տերմինալներ), ինչպես նաև Քաղվածքների ավտոմատացված ուղարկման դեպքում ծրագրային խափանումների հետևանքով Քաղվածքների չստացման համար:

4.5. Բանկը պատասխանատվություն չի կրում բոլոր այն դեպքերի համար, երբ Քարտով կատարված գործարքի վերաբերյալ Քարտապանին կարճ հաղորդագրության (SMS) միջոցով Բանկի անհապաղ տեղեկացումից հետո Քարտապանի կողմից չեն ձերնարկվել կանխարգելիչ միջոցառումներ և Բանկին անհապաղ չի հայտնել գործարքն իր կողմից չկատարված լինելու մասին:

4.6. Քարտային հաշվի մուտքերի և ելքերի վերաբերյալ SMS ծառայությունն ակտիվածված լինելու դեպքում Քարտապանի տրամադրած հեռախոսահամարին ուղարկված SMS-ները Քարտապանին Բանկից անկախ պատճառներով չհասնելու և դրա հետևանքով Քարտապանի կրած վնասների կամ ունեցած կորուստների համար Բանկը պատասխանատվություն չի կրում:

4.7. Բանկը պատասխանատվություն չի կրում համացանցում (ինտերնետ) 3D Security անվտանգության համակարգ ունեցող կայքերի միջոցով գործարք կատարելու անհնարինության դեպքում, եթե Քարտապանը չի դիմել Բանկ կարճ հաղորդագրության ծառայությունն (SMS) ակտիվացնելու համար, կամ դիմել է սակայն տրամադրել է ոչ վավեր հեռախոսահամար, կամ այդ ծառայությունն ակտիվացված է, սակայն կարճ հաղորդագրության ուղարկման պահին հեռախոսահամարը գտնվում է անհասանելի վիճակում կամ եթե կարճ հաղորդագրությունը Քարտապանին չի հասել երրորդ անձի գործողության կամ անգործության պատճառով կամ Բանկից անկախ որևէ այլ պատճառներով:

4.8. World Elite™ Mastercard®-ի Քարտապաներին տրամադրվող առավելությունները և ծառայությունները, այդ թվում ՝ ապահովագրությունները տրամադրվում և սպասարկվում են Mastercard®-ի և/կամ վերջինիս հետ համագործակցող գործընկերների կողմից: Բանկը պատասխանատվություն չի կրում Mastercard®-ի կողմից World Elite™ քարտերի սպասարկման շրջանակում տրամադրվող առավելությունների և ծառայությունների ամբողջականության և որակի համար:

5. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

5.1. Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում Դիմումը բավարարելու վերաբերյալ Բանկի կողմից դրական որոշում կայացվելու պահից և գործում է մինչև Կողմերի ստանձնած պարտավորությունների լրիվ կատարումը:

5.2. Սույն պայմանագրով Կողմերի ստանձնած պարտավորությունները պարտադիր իրավաբանական ուժ ունեն Կողմերի իրավահաջորդների համար:

5.3. Պայմանագրի լուծումը կարող է իրականացվել յուրաքանչյուր կողմի պահանջով: Ընդ որում, Քարտապանը կարող է լուծել պայմանագիրը՝ գրավոր տեղեկացնելով Բանկին, ամբողջությամբ կատարելով Բանկի հանդեպ ունեցած իր պարտավորությունները և Քարտով կատարված Գործարքների բոլոր փոխհաշվարկների իրականացումից հետո Քարտը վերադարձնելով Բանկին:

6. ԾԱՆՈՒՑՈՒՄ

6.1. **ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ**: Խնդրում ենք ծանոթանալ սույն փաստաթղթի դրույթերին: Ձեր ավանդի հատուցման երաշխավորողն է Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամը (այսուհետ՝ «Հիմնադրամ»): Հիմնադրամի գտնվելու վայրը՝ Երևան, Վազգեն Սարգսյան 6, 375010, հեռախոսը՝ (+374 10) 583514, ինտերնետային կայքէջ՝ www.adgf.am: Սույն ծանուցման բոլոր սահմանումները համապատասխանում են «Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ Օրենքի) սահմանումներին:

6.2. Հատուցման դեպքը.

6.2.1. Ձեր երաշխավորած ավանդը ենթակա է հատուցման հետևյալ դեպքերում.

- Եթե Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով բանկը ճանաչվում է անվճարունակ և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի (այսուհետ՝ «Կենտրոնական բանկ») խորհրդի որոշմամբ հաստատվում է բանկի կողմից օրենքով և պայմանագրերով սահմանված ժամկետում ավանդների վերադարձնելն ի վիճակի չլինելու փաստը կամ
- Եթե Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով բանկը սնանկ է ճանաչվում (այսուհետ՝ «անվճարունակ բանկ»):

6.2.2. Երաշխավորված ավանդի առավելագույն չափը և հաշվարկման կարգը.

Երաշխավորված ավանդների հաշվարկման կարգը սահմանվում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի օգոստոսի 26-ի թիվ 261 որոշմամբ:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ: Ձեր՝ նույն բանկում ունեցած բոլոր դրամային ավանդները համարվում են մեկ դրամային ավանդ, բացառությամբ չերաշխավորված ավանդների, և Ձեր՝ նույն բանկում ունեցած բոլոր արտարժութային սվանդները համարվում են մեկ արտարժութային ավանդ, բացառությամբ չերաշխավորված ավանդների:

Այն դեպքում, երբ բանկի նկատմամբ Ձեր բանկային ավանդը ձևավորվել է բանկի՝ մեկ կամ մի քանի բանկերի միացման արդյունքում, ապա յուրաքանչյուր միացող բանկում Ձեր ունեցած բանկային ավանդը դիտվում է որպես առանձին բանկային ավանդ՝ Օրենքով սահմանված կարգով:

Ավանդների երաշխավորող սահմանաչափերը հետևյալն են՝

Ավանդի արժութային կառուցվածքը	**Եթե նույն բանկում ունեք միայն դրամային ավանդ**	**Եթե նույն բանկում ունեք միայն արտարժութային ավանդ**	**Եթե նույն բանկում ունեք և ՀՀ դրամով, և արտարժույթով ավանդ**	
			Եթե դրամային ավանդը 7 միլիոն դրամից ավել է	Եթե դրամային ավանդը 7 միլիոն դրամից պակաս է
Ավանդի երաշխավորման առավելագույն չափը	*16 միլիոն ՀՀ դրամ*	*7 միլիոն ՀՀ դրամ*	*16 միլիոն ՀՀ դրամ (երաշխավորվում է միայն դրամային ավանդը)*	*7 միլիոն ՀՀ դրամ (երաշխավորվում է դրամային ավանդն ամբողջությամբ և արտարժութային ավանդը՝ 7 միլիոն դրամի և հատուցման ենթակա դրամային ավանդի տարբերության չափով)*

Եթե Դուք անվճարունակ բանկում ունեք առանձին բանկային ավանդ և միևնույն ժամանակ նույն բանկում ներդրված համատեղ բանկային ավանդի սեփականատեր եք, ապա երաշխավորվում է Ձեր առանձին բանկային ավանդի և համատեղ բանկային ավանդում Ձեր մասնաբաժնի հանրագումարը՝ Օրենքով սահմանված կարգով և չափով:

Եթե Դուք անվճարունակ բանկի նկատմամբ ունեք խնդրահարույց պարտավորություն, ապա հատուցման ենթակա գումարը կհաշվարկվի Ձեր բանկային ավանդի և խնդրահարույց պարտավորության դրական տարբերության հիման վրա: Խնդրահարույց պարտավորություն է համարվում Ձեր

այն պարտավորությունը, որի հիմնական գումարի (կամ դրա մի մասի) մարումը կամ տոկոսների վճարումն ուշացրել եք պայմանագրում նշված ժամկետից 90 օրից ավելի։

Երկու կամ ավելի ավանդատուներ համատեղ բանկային ավանդը համարվում է յուրաքանչյուր անձի առանձին բանկային ավանդ, ավանդատուի՝ պայմանագրով սահմանված մասնաբաժնի չափով։ Եթե պայմանագրով սահմանված չեն համատեղ բանկային ավանդի ավանդատուների մասնաբաժինները, ապա համատեղ բանկային ավանդն ավանդատուների միջև բաժանվում է հավասարաչափ։

Բանկային ավանդի հատուցումը կատարվում է միայն հայկական դրամով։ Արտարժութային բանկային ավանդի դրամական համարժեքությունը որոշվում է հատուցման դեպքը տեղի ունենալու օրվա դրությամբ Կենտրոնական բանկի հրապարակած՝ արժութային շուկաներում ձևավորված միջին փոխարժեքով։

Ձեր բանկային ավանդը չի հատուցվում, եթե հատուցման դեպքը տեղի ունենալու օրվա դրությամբ այդ ավանդը պակաս է 1000 ՀՀ դրամից։

6.2.3. Ձերաշխավորված բանկային ավանդ՝

Ձեր բանկային ավանդը երաշխավորված չէ, եթե՝

ա) Դուք հանդիսանում եք տվյալ բանկի ղեկավար և/կամ վերջինիս ընտանիքի անդամ,

բ) Դուք հանդիսանում եք տվյալ բանկում նշանակալից մասնակցություն ունեցող անձ և/կամ վերջինիս ընտանիքի անդամ,

գ) Դուք որպես ավանդի սեփականատեր համասեփականատեր, հրաժարվել եք ավանդի՝ Ձեր մասի նկատմամբ սեփականության իրավունքից,

դ) Ձեր ավանդն օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով ճանաչվել է հանցավոր ճանապարհով ձեռք բերված դրամական միջոց, քանի դեռ Դուք հակառակը չեք ապացուցել,

ե) Ձեր ավանդը տվյալ բանկում ներդրվել է բանկային ավանդի ներդրման պահին տվյալ բանկի կողմից հրապարակային պայմանագիր կնքելու առաջարկով նախատեսված նմանատիպ բանկային ավանդների տոկոսադրույքն առնվազն 1,5 անգամ գերազանցող տոկոսադրույքով,

զ) Ձեր ավանդը ներդրված է բանկի՝ Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս ստեղծված մասնաճյուղերում։

6.2.4. Երաշխավորված ավանդների հատուցման կարգը և ժամկետները՝

Հատուցման դեպքի օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում Հիմնադրամը հայտարարություն է հրապարակում հատուցման դեպքի մասին։ Հատուցման դեպքի օրվան հաջորդող քսաներորդ աշխատանքային օրվանից սկսած Հիմնադրամը, անվճարունակ բանկի կամ այլ բանկի միջոցով, սկսում է իրականացնել Ձեր ավանդների հատուցման գործընթացը։ Դուք կարող եք գրավոր կամ էլեկտրոնային եղանակով պահանջ ներկայացնել ոչ ուշ, քան հատուցման դեպքի օրվան հաջորդող երեք տարվա ընթացքում։ Նշված ժամկետում Ձեր կողմից գրավոր պահանջ չներկայացնելու դեպքում Հիմնադրամի կողմից Ձեր երաշխավորված ավանդի հատուցում չի իրականացվի։ Հիմնադրամը պարտավոր է իրականացնելավանդատուների պահանջներով հատուցումներ՝ գրավոր կամ էլեկտրոնային եղանակով պահանջը ներկայացնելու օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում, բացառությամբ Օրենքով նախատեսված դեպքերի։

<u>ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ</u>։ Ձեր ավանդի հատուցումն առավել սահուն իրականացնելու նպատակով առաջարկում ենք ավանդի ներդրման ժամանակ Ձեր կողմից բանկին տրամադրված տվյալների (անձը հաստատող փաստաթղթի տվյալներ, սոցիալական ապահովության քարտի տվյալներ, հասցե, հեռախոսահամար և այլն) ցանկացած փոփոխության դեպքում այդ մասին անմիջապես տեղեկացնել բանկին։